

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Մարմինի կեանքը՝ հոգին է եւ հոգիի կեանքը՝ կենդանի հաւատքը: Հաւատքի կեանքը՝ սէրն է եւ սիրոյ կեանքը՝ յոյսը: Յոյսի կեանքը՝ Աստուծոյ խոստումն է եւ խոստումի կեանքը՝ Աստուծոյ նկատմամբ ճշմարտութիւնը: Ուրեմն ամուր բռնենք հաւատքի ճշմարտութիւնը, որուն միջոցաւ ճշմարիտ Աստուած կը ճանչնանք, կը սիրենք ու կ'ակնկալենք աներեւոյթ պարգեւները, որ խօսեցաւ շնորհել անոնց՝ որոնք հաւատքով յոյսով ու սիրով կը ծառայեն իրեն:

Այս կեանքի փառքն ու մարմնական վայելքը նախքան ստանալը քաղցր կը թուի, բայց ստանալէ ետք մարդուն ախորժակը լեղիի կը դարձնէ: Իսկ գիտութիւնն ու առաքինութիւնը, որոնք մտքի ու հոգիի վայել են, հակառակ կը գործեն. նախքան ստանալը՝ դժուարին կը թուին, բայց ստանալէ ետք՝ հոգին կը քաղցրացնեն:

Ինչ որ կ'ընես ընկերոջդ, այն կ'ընես քու Արարիչիդ: Աստուած իրեն կը համարէ այն, ինչ որ կ'ընես ուրիշին, որովհետեւ ան ալ իր արարածն է, եւ կը հատուցանէ քեզ ըստ ըրածիդ՝ բարի թէ չար: Ուրեմն ջանա՛ բարիք գործել քու ընկերոջդ, որպէսզի քեզի ալ բարի ըլլայ, որովհետեւ ինչ որ կը սերմանես, նոյնը կը հնձես:

Կեանքէն աւելի պատուական բան չկայ, բայց ասոնցմէ աւելի անարգ ոչինչ չկայ մոլիներուն աչքերուն...

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵՒԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԵՆ

ՈԳԵՀԱՐՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԳԱՒԱԹ ԴԱՐՁՆԵԼ

Պերլինէն ստացուած նամակի մը մէջ կը կարդանք գաւաթ դարձնելուն եւ անոր հետեւանքներուն մասին: «Ես ու կինս ծանօթներէն լսած ենք գաւաթ դարձնելու մասին: Մենք գիտենք, որ ոգեկանչութիւնը Սատանայէն է, եւ ատով չզբաղեցանք: Բայց ասիկա մեզի համար նոր բան մըն է: Թողթի վրայ Այբուբենը գրուած էր, եւ գաւաթը կը շարժէր մէկ տառէն միւսը: Այն հարցումին՝ թէ ո՞վ է մեզի հետ խօսողը, մեռած հոգիներու անունները կը տրուէին: Եւ այդպէս, սենեակին մէջ ներկայ եղողները իրենց հարցումներուն պատասխանները ստացան:

«Երկուքս ալ ուզեցինք գիտնալ, թէ ինչ թաքուն ուժ կայ այդտեղ: Մենք արդէն գԱստուած գտեր էինք եւ չար ոգիներէն պաշտպանուած կը զգայինք: Այո՛, կը փնտռէինք գԱյն՝ մեր Տէրը, բայց ոչ՝ մաքուր սրտով-այլապէս մեղքի մէջ պիտի չիյնայինք: Մենք չգիտակցեցանք, թէ մեղաւոր ենք եւ տակաւին չենք ապաշխարած, թէ եւ ամբողջ սրտով կը փնտռէինք գԱստուած:

«Կը հաւատայինք, որ Աստուած գիտէ մեր փնտառութիւններուն մասին, եւ այստեղ, այս բնակարանին մէջ մեզի պիտի յայտնուի եւ ըսէ՝ թէ ինչ ուժի միջոցաւ է որ կը շարժի գաւաթը: Բայց մեզի վիճակուած էր՝ այդ մասին ուրիշ միջոցաւ իմանալ, քան կը կարծէինք... **Շարունակելի**

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԵՐԻ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴԱՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 9 ԴԵՎՏԵՄԲԵՐ, 2012 ԹԻՒ 50

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՆՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 14.12-24

Գ.ՅԻՍԱԿԻ

Ապա Յիսուս տանտիրոջ ըսաւ. «Երբ ճաշի կամ ընթրիքի հրաւէր կու տաս, մի՛ կանչեր բարեկամներդ կամ եղբայրներդ, որպէսզի չըլլայ՝ որ անոնք ալ քու հրաւէրիդ փոխարէն քեզ հրաւիրեն, եւ այս ձեւով քեզի հատուցում կատարած ըլլան: Ընդհակառակը, երբ ընդունելութիւն կը սարքես, կանչէ՛ աղքատներն ու խեղանդամները, կաղերն ու կոյրերը եւ այն ատեն երանելի պիտի ըլլաս, որովհետեւ անոնք քեզի փոխարէնը հատուցանելիք ոչինչ ունին: Եւ զիտցած եղիր, որ քու հատուցումդ պիտի ստանաս արդարներու յարութեան ժամանակ»:

Երբ սեղանակիցներէն մէկը այս խօսքերը լսեց, ըսաւ Յիսուսի. «Երանի՛ անոր, որ Աստուծոյ արքայութեան մէջ ճաշ պիտի ուտէ»:

Յիսուս անոնց հետեւեալ առակը պատմեց.- Մարդ մը կար, որ մեծ ընթրիք մը սարքեց եւ շատեր հրաւիրեց: Ընթրիքի ժամուն իր ծառան դրկեց, որպէսզի հրաւիրեալներուն ըսէ. «Եկէ՛ք, ամէն ինչ պատրաստ է»: Հրաւիրեալները սկսան մէկ առ մէկ հրաժարիլ: Առաջինը ըսաւ. «Ազարակ գնեցի. պէտք է երթամ եւ տեսնեմ գայն. հետեւաբար կը խնդրեմ՝ որ ներողամիտ գտնուի»: Միւսը ըսաւ. «Հինգ գոյգ եզ գնեցի. պէտք է երթամ փորձեմ գանոնք-հետեւաբար կը խնդրեմ՝ որ ներողամիտ գտնուի»: Ուրիշ մը ըսաւ. «Տակաւին նոր ամուսնացայ. հետեւաբար չեմ կրնար գալ»: Ծառան վերադարձաւ եւ իր տիրոջ պատմեց անոնց ըսածները: Այն ատեն տանտէրը վրդոված՝ ըսաւ ծառային. «Անմիջապէս քաղաք գնա՛ եւ հրապարակներուն ու փողոցներուն մէջ որքան որ աղքատ, խեղանդամ, կաղ եւ կոյր տեսնես, բոլորն ալ հոս բեր՛»: Քիչ ետք ծառան վերադառնալով իր տիրոջ ըսաւ. «Տէ՛ր, հրամանդ կատարեցի, բայց տակաւին տեղ կայ»: Տէրը ծառային հրամայեց. «Քաղաքէն դուրս գնա՛ եւ ճամբաներուն վրայ ու դաշտերուն մէջ որու որ գտնես, ստիպէ՛ որ գայ, որպէսզի տունս լեցուի: Կ'ըսեմ ձեզի, որ առաջին հրաւիրեալներէն ո՛չ մէկը ինծի հետ ընթրիքի պիտի նստի»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

**ՍՐԲՈՑՆ՝ ՄԻՆԱՍԱՅ,
ԵՐՄՈԳԻՆԵԱՅ, ԵՒԳՐԱՓՈՍԻ ԵՒ
ԿԱՄԱԻՈՐ ԱՂՔԱՏԱՅՆ՝
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՒ ԱԼԵՔՍԻԱՆՈՍԻ**

Մինաս, Երմոգինէս եւ
Եւգրափոս վկայներ

4-րդ դարուն, Մաքսիմիանոս կայսր, իր իշխանութեան տակ գտնուող խռովայոյզ Աղեքսանդրիա քաղաքը խաղաղացնելու համար կը դրկէ Մինաս անունով ճարտասան եւ իմաստուն մարդ մը, որ իր առաքելութեան մէջ յաջողելով, կառավարիչ կը նշանակուի կայսրին կողմէ: Ան իր հետ Աղեքսանդրիա կը տանի նոյնպէս իմաստուն իր քարտուղարը՝ Եւգրափոս անունով:

Մինաս գաղտնաբար քրիստոնեայ հաւատացեալ մըն էր, սակայն իր ցուցաբերած բարեկամութիւնն ու օգնութիւնը հանդէպ քրիստոնեաներուն, առիթ կը հանդիսանան որպէսզի Աղեքսանդրիոյ մեծանուն հեթանոսները բացայայտեն անոր քրիստոնէութիւնը եւ կայսրին դիմելով գահընկեց ընեն զինք:

Կայսրը Մինասին տեղ Աղեքսանդրիոյ կառավարիչ կը նշանակէ Երմոգինէս անունով նոյնպէս Աթենացի, իմաստուն եւ ճարտար մարդ մը, որ փոխարինելով Մինասը, յաճախ կը փորձէր ուրացութեան հրաւիրել նախկին կառավարիչը ու հեթանոսութեան դարձնել զայն: Ան նոյնիսկ կտրել կու տայ Մինասին լեզուն եւ աչքերը փորելով բանտ կը նետէ զայն: Սակայն երբ յաջորդ օրը Մինաս հրաշքով բժշկուած դուրս կու գայ բանտէն, Երմոգինէս կը զղջայ եւ ինք եւս դարձի կու գայ ու քրիստոնեայ կը մկրտուի:

Այս լսելով կայսրը դատի կը կանչէ երկուքը, որոնց հետ նաեւ Եւգրափոս քարտուղարը: Երեքն ալ չարչարանքներու կ'ենթարկուին եւ քաջաբար կը տոկան, պաշտպանելով իրենց հաւատքը: Ապա կայսրը չհանդուրժելով Եւգրափոսի անարգանքին, որ համարձակ կը խայտառակէր զինք իրենց ամուր հաւատքէն հրաժարեցնել չկարենալուն համար, նախ կը սպաննէ քարտուղարը եւ ապա կը գլխատէ Մինաս ու Երմոգինէս վկայները, որոնք նահատակուելով Քրիստոսի անունին համար, արժանի կը դառնան Աստուծոյ Արքայութիւնը ժառանգելու:

Յովհաննէս կամաւոր աղքատ

Յովհաննէս ճգնաւորի կեանքին մասին երկու տարբերակներ կը ներկայացնեն վարքագիրները, Արեւելեան եւ Արեւմտեան: Ան տօնացոյցին անցած է երկու տարբեր անուններով, թէ որպէս Գրեցի եւ թէ որպէս Կամաւոր Աղքատ:

Ըստ Արեւելեանին, եղած է Կեսարացի այրի մօր մը միակ գաւակը, ծագումով հայ կամ ասորի: Փոքր տարիքէն կը հեռանայ տունէն եւ ցամքած հորի մը մէջ մտնելով այնտեղ կը ճգնի շուրջ տասը տարիներ, յաղթահարելով բոլոր տեսակի դժուարութիւնները: Այդ իսկ պատճառով, Յովհաննէս Արեւելեան տօնացոյցերուն մէջ ճանչցուած է Գրեցի մակղիրով:

Իսկ ըստ Արեւմտեանին, եղած է Կ.Պոլսեցի եւ ապրած է 5-րդ դարու երկրորդ քառորդին: Կանուխ տարիքին գաղտնաբար կը հեռանայ տունէն եւ կը ճգնի անապատի մը մէջ, ուր սակայն չդիմանալով ծնողքի կարօտին, 6 տարիներ ետք կը վերադառնայ իր ծննդավայրը, բայց առանց ինքզինք յայտնելու ծնողքին, իրենց տան մօտիկ բնակարանի մը մէջ կը ճգնի 8 տարիներ: Մահուան սնարին մէջ ինքզինք կը յայտնէ ծնողքին ցոյց տալով անոնցմէ ժառանգ մնացած Աստուածաշունչը: Այսպիսով կը վախճանի Ս. Յովհաննէս, առնելով Նրճթաբնակ՝ մակղիրը Արեւմտեան եկեղեցիներու մէջ:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

Քրիստոնեան պարտի օրը երեք առիթներով աղօթել, առաւօտուն՝ երբ քունէն արթննայ, ճաշի ժամուն, եւ գիշերը՝ քնանալու պահուն: Իւրաքանչիւր աղօթքի ժամուն այր մարդիկ ու կտրիճ երիտասարդներ պէտք է 12 անգամ ծնրադրեն, որ կ'ընէ օրը 36 անգամ. իսկ կիներն ու աղջիկները պէտք է 20 անգամ ծնրադրեն, օրական՝ 60 անգամ:

Մարդ երբ արթննայ, պէտք է աղօթէ, գոհութիւն տայ Աստուծոյ որ զինք խաւարէն լոյսի հանեց: Ծաշի ժամանակ պէտք է շնորհակալութիւն յայտնէ որ կերակուր տուած է, եւ ոչ թէ անասունի նման անգիտակցաբար վայելէ Աստուծոյ բարիքը: Գիշերը պէտք է աղօթէ որպէսզի մութին ու գիշերուան մէջ Աստուած անփորձ պահէ, նաեւ գոհութիւն յայտնէ՝ որ օրը խաղաղութեամբ վերջացաւ: Մի՛ ձգէք որ ձեր գաւակները առանց աղօթքի հաց ուտեն կամ քնանան: Այս երեք աղօթքները անխափան ամէն տեղ կատարեցէ՛ք. ճամբան, արտին ու այգիին եւ բոլոր գործերու մէջ. որովհետեւ սուրբ առաքեալը Փիլիպպոս կանոն դրած է, թէ՛ «Ամէն այր կամ կին կամ երիտասարդ որ իր գործի ժամանակէն դուրս, առաւօտուն եւ երեկոյեան կը խափանէ աղօթքները՝ եկեղեցի չերթալով եւ ականջ չդնելով սահմանուած կարգերուն, նզովուած ըլլայ» (կանոն Ը):

Շաբաթ եւ Կիրակի օրերը հաւասարապէս եկեղեցի գացէք, որովհետեւ շաբաթ օրը տօնն է սուրբ մարտիրոսներուն, որոնք Աստուծոյ սիրոյն իրենց անձը մահուան յանձնեցին եւ անտանելի չարչարանքներով նահատակեցան: Եկեղեցի երթալով եւ անոնց չարչարանքները լսելով մասնակից կ'ըլլանք սուրբերու փառքին:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

ՃՇՄԱՐԻՏ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

Մեծ մրցանակ մը խոստացուած էր այն նկարիչին, որ լաւագոյն կերպով պիտի ներկայացնէր խաղաղութիւնը իր նկարով: Բոլոր մրցողներուն մէջէն միայն երկու անձերու նկարները ընտրուեցան: Մէկը կը պարզէր ամառնային դաշտային պատկեր մը: Առուակը կը հոսէր կանաչ մարգագետիններուն մէջէն արծաթի լայն ժապաւէնի մը նման: Ժայռերը կեցած էին տարածուն ու հանդարտ: Հօտը կ'արածէր հսկայ կաղնիի մը գով շուքին տակ: Հրաշագեղ թեւերով թիթեռնիկները կը հանգչէին գոյնգոյն վարդերու եւ ծաղիկներու վրայ, թռչունները թառած էին ծառերուն ճիւղերուն ու կ'երգէին: Կապոյտ երկնակամարը կը հովանաւորէր ամէն ինչ: Այս էր ահա մէկուն նկարած «խաղաղութիւնը»:

Սակայն մրցանակը տրուեցաւ այն նկարիչին, որ իր պաստառին վրայ կը պարզէր սաստիկ ալեկոծ ովկիանոս մը, որուն ալիքները կատաղօրէն կը զարնուէին եզերքի ժայռերուն ու կը փշրուէին: Մութ էր երկինքը ու ամպամած: Կայծակը կ'այրէր ամպերուն սիրտը: Սակայն մօտակայ բարձր ժայռի մը կողքին, խոռոչի մը մէջ բոյն մը կար, ուր թռչուն մը կը հանգչէր իր ձագերուն վրայ: Փրփրադէզ, կատաղի ալիքները զայրոյթով կը բախէին ժայռին, սակայն թռչունը որեւէ վախի նշան ցոյց չէր տար եւ կատարեալ խաղաղութեան մէջ հանդարտութեամբ կը դիտէր այս բոլորը, որովհետեւ զիտէր թէ այն ապառաժը որուն վրայ կը հանգչէր՝ ամուր էր ու ապահով:

Քրիստոս է հաւատացեալին միակ ապաստանարանը, ուր հանգչելով անկրնայ դիտել կեանքի բոլոր վտանգները՝ լման խաղաղութեան մէջ եւ առանց վախի:

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
37.14-38**

Եզեկիա պատգամաւորներուն ձեռքէն առաւ նամակը, եւ կարդալէ ետք զնաց Տիրոջ տաճարը մտաւ եւ Տիրոջ առջեւ փռեց զայն: Ապա Եզեկիա Տիրոջ աղօթեց, ըսելով. «Ո՛վ Երկնաւոր Զօրքերու Տէր, Իսրայէլի Աստուածը, որ քերովբէներէն վեր կը նստիս. դո՛ւն ես միակ Աստուածը աշխարհի բոլոր թագաւորութեանց, որովհետեւ երկինք ու երկիր դո՛ւն ստեղծեցիր: Ականջ տուր եւ լսէ՛, Տէ՛ր, նայէ եւ տես այն պատգամը որ Սենեքերիմ թագաւորը զրկեց՝ նախատելու համար քեզ, որ կենդանի Աստուածն ես: Իրաւ է որ Ասորեստանի թագաւորները ամբողջ աշխարհը աւերեցին եւ բոլոր ժողովուրդներու կողմքերը այրեցին, որովհետեւ անոնք աստուածներ չէին, այլ մարդոց ձեռքով շինուած փայտ ու քար էին եւ ուստի փճացան: Բայց դուն, ո՛վ Տէր, մեր Աստուածը, ազատէ՛ մեզ անոր ձեռքէն, որպէսզի աշխարհի բոլոր թագաւորութիւնները ճանչնան թէ միայն դո՛ւն ես Աստուածը»:

Այն ատեն Աստուած Ամոսի որդի Եսային զրկեց Եզեկիայի մօտ, եւ անիկա գալով, ըսաւ. «Այսպէս կ'ըսէ Տէրը, Իսրայէլի Աստուածը.- Լսեցի ինչ որ աղօթքով խնդրեցիր ինձմէ Ասորեստանի Սենեքերիմ թագաւորին համար: Ահա, Աստուած այսպէս կ'ըսէ անոր. "Սիտն քաղաքը, որ չկրցար գրաւել, պիտի անարգէ եւ արհամարհէ քեզ, Երուսաղէմի բնակչութիւնը պիտի հեզնէ ու ծաղրէ քեզ:

**Շարունակել
Աստուածաշունչէն**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ
ՆԱՄԱԿԸ**

**ԹԵՍԱԶՈՆՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ
1.1-12**

Մենք՝ Պօղոս, Սիղուանոս եւ Տիմոթէոս, կը գրենք ձեզի՝ Թեսաղոնիկեցիներու եկեղեցիին որ մեր Հօր Աստուծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի կը պատկանի: Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:

Եղբայրներ, պարտք կը զգանք եւ արդար կը գտնենք ձեզի համար միշտ գոհութիւն յայտնել Աստուծոյ, որովհետեւ ձեր հաւատքը հետզհետէ աւելի կ'աճի եւ ձեզմէ իւրաքանչիւրին սէրը իրարու հանդէպ աւելի կը խորանայ: Աստուծոյ եկեղեցիներուն մէջ մենք կը պարծենանք ձեզմով, այն համբերութեան եւ հաւատքին համար որ դուք ցուցաբերեցիք ձեր կրած բոլոր հալածանքներուն եւ նեղութիւններուն մէջ: Ձեր այդ համբերութիւնը եւ հաւատքը ապացոյց պիտի ըլլան Աստուծոյ արդար դատաստանին, որովհետեւ դուք արժանի պիտի ըլլաք Աստուծոյ արքայութեան, որուն համար այդքան կը տանջուիք: Արդարեւ, Աստուծոյ համար արդարութիւն պիտի ըլլայ ձեզ չարչարողները տանջանքով պատժել, իսկ ձեզի՝ տանջուածներուդ, հանգիստ պարգեւել մեզի հետ միասին, երբ մեր Տէրը Յիսուս հրեշտակներու իր բանակով երկինքէն յայտնուի:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՄՆԵՐԸ**